ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/61/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 14 փետրվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի, 2025 թվականի փետրվարի 14-ին քննելով ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Նշանի Ղազարյանի ընտանիքի անդամ Մելանյա Ռաֆայելի Մկրտչյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով հարուցված թիվ ՎԻՎ/61/2025 վարչական գործը

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված անհամատեղելիության պահանջների

և այլ սահմանափակումների հիման վրա «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն իրականացրել է հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամ հանդիսացող Մելանյա Ռաֆայելի Մկրտչյանի կողմից Հանձնաժողով ներկայացված 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի արդյունքում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը՝ Մելանյա Մկրտչյանը Հայտարարագրի «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում չի հայտարարագրել իր՝ «Ղ Ֆարմ» ՍՊ ընկերության 50% բաժնետեր լինելու վերաբերյալ տվյալը:

1.2 Հանձնաժողովը ձեռք բերված և ուսումնասիրված վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի փետրվարի 7-ին Մելանյա Մկրտչյանին հասցեագրել է թիվ 01/507/1-2025 գրությունը՝ խնդրելով գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ներկայանալ Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար, իսկ 5-րդ աշխատանքային օրը, ժամը 15:00-ին՝ գործի քննությանը մասնակցելու նպատակով: Նշված գրությունը Մելանյա Մկրտչյանը ստացել է 2025 թվականի փետրվարի 7-ին, դրա մասին հաստատումը և իր պարզաբանումն առձեռն ներկայացնելով Հանձնաժողով:

1.3 2025 թվականի փետրվարի 12-ին պատշաճ ծանուցված Մելանյա Մկրտչյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 11/25 արձանագրություն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Մելանյա Ռաֆայելի Մկրտչյանի բացակայությամբ 2025 թվականի փետրվարի 14-ին՝ ժամը՝ 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

Մելանյա Մկրտչյանը 2025 թվականի փետրվարի 7-ին առձեռն Հանձնաժողով է ներկայացրել, հետևյալ բովանդակությամբ պարզաբանումը.

«(...) 2025 թվականի փետրվարի 7-ին էլեկտրոնային ծանուցմամբ թիվ 01/507/1-2025 ելից թվագրմամբ ստացել եմ գրություն այն մասին, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) իմ կողմից Հանձնաժողով ներկայացված հայտարարագրերի՝ այդ թվում 2023 թվականի պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրի ուսումնասիրությամբ պարզել է, որ նշված հայտարարագրում (հայտարարագրերում) «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում «Ղ Ֆարմ» ՍՊ ընկերության բաժնեմասնակցության վերաբերյալ հայտարարագրված տվյալներ առկա չեն:

Վերոգրյալի պայմաններում որպես բացատրություն և պարզաբանում (այդ թվում՝ որպես առարկություն զանցանք որակելու հանգամանքի կապակցությամբ) հարկ եմ համարում նշել, որ իմ կողմից «Բ3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում «Ղ ֆարմ» ՍՊ ընկերության բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալներ չներկայացնելը նախ որևէ դիտավորության արդյունք չի եղել, քանի որ անհերքելի փաստ է, ու ես ընդունում եմ, որ ես հանդիսանում եմ «Ղ Ֆարմ» ՍՊ ընկերության համահիմնադիր՝ 50 տոկոս բաժնեմասով: Դիտավորության արդյունք չի եղել, քանի որ դա կնշանակեր, թե իբր ես ցանկանում եմ այդ հանգամանքը թաքցնել այն պայմաններում, երբ դա թաքցնելն անտրամաբանական է:

Անտրամաբանական և տեսական ու գործնական առումով անհնարին է դա թաքցնել կամ նման մտադրություն ունենալը, քանի որ առնվազն ՀՀ ՊԵԿ-ում այդ տվյալներն առկա են, ես դա որևէ կերպ չեմ թաքցրել և գիտակցել ու գիտակցում եմ, որ Հանձնաժողովը դա կարող է ստուգել: Բացի այդ, իմ կողմից այդ հանգամանքը թաքցնելու միտումը ևս իրականության հետ աղերս ունենալ չի կարող, քանզի ես

հանդիսանում եմ Համայնքի ղեկավարի ընտանիքի անդամ՝ կին, ով ունի հեղինակություն, ներկայիս քաղաքական իշխանության թիմից է, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ, և իմ կողմից որևէ հանգամանքի թաքցնելը կնշանակեր ամուսնուս և ՀՀ-ում կառավարող իշխանական-քաղաքական թիմի հեղինակության հետ խաղալ, որն ինձ համար առնվազն անթույլատրելի է: Նման պայմաններում, հիմնավորապես բացառելով դիտավորությամբ չներկայացնելու հանգամանքը՝ ցանկանում եմ անդրադառնալ անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու կանխավարկածին, ինչը նախատեսված է որպես զանցանք Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով:

Գտնում եմ, որ իմ կողմից 2023 թվականի հայտարարագրի (նախորդ տարիների հայտարարագրերում) «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ » բաժնում «Ղ ֆարմ» ՍՊ ընկերության բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալներ չներկայացնելն իրականում իմ կողմից ոչ թե անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու հատկանիշներ է պարունակում, այլ իրականությունն այն է, որ «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժինն իմ կողմից չի ընկալվել որպես ՍՊԸ-ում հիմնադիր կամ մասնակից լինելու հանգամանք պարունակող տվյալների ներկայացման հարթակ /բաժին/: Անկեղծ լինելով ասեմ, որ մատնանշված բաժնում ինձ թվացել է և ես մտածել ու հասկացել եմ, թե պետք է ներկայացվեն օրինակ որևէ ընկերությունում կամ կոպերատիվում արժեթուղթ՝ մուրհակ կամ գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ ունենալու հանգամանքը, ինչը ես չունեմ, և «Ղ ֆարմ» ՍՊ ընկերությունում ես 2023 թվականին կամ դրանից առաջ ներդրում որպես այդպիսին չեմ կատարել: Հետևաբար, կարծել ու մտածել եմ, որ չկա հայտարարագրի մեջ որևէ մի բաժին, որտեղ պետք է իմ բաժնեմասնակցության վերաբերյալ նշեի, հակառակ դեպքում՝ ուսումնասիրելով իմ հայտարարագրերը՝ հաստատ պարզել եք, որ ես ամեն ինչ պատշաճ և պարզ ներկայացրել եմ, առանց որևէ հանգամանք թաքցնելու, խեղաթյուրելու կամ անզգուշաբար չներկայացնելու:

Իսկ քննարկվող հանգամանքի մասին չներկայացնելն իմ կողմից ընդամենը կրել է տվյալ բաժինն ամբողջապես չընկալելու արդյունք, այդ հասկացությունն ամբողջապես չհասկանալու հետևանք:

Իհարկե հիմա գիտակցում եմ, որ հանձնաժողովը կարող է վկայակոչել այն հանգամանքը, թե չիմացությունը կամ ուղեցույցը մի քանի անգամ մանրամասն չկարդալը չի կարող ազատել պատասխանատվությունից, սակայն իմ կարծիքով և իմ գնահատմամբ այստեղ խոսք չի կարող գնալ պատասխանատվության մասին, քանզի կարծում եմ, որ իմ արարքով ոչ թե զանցանք եմ կատարել, այդ թվում՝ ոչ թե անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ եմ ներկայացրել, այլ չհասկանալով և չընկալելով մատնանշված բաժնի ամբողջական պահանջը՝ ուղղակի ՍՊԸ-ում իմ մասնակցության վերաբերյալ չեմ նշել: Ավելին, քանի որ քննարկման առարկա է հանդիսանում բացառապես 2023 թվականի պաշտոնատար անձի ընտանիքի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը (այն իմաստով, որ նախորդ տարիների հայտարարագրերը ՎԻՎՕ-ի իմաստով մեկ տարին լրացած լինելու հիմքով քննարկման ենթակա չեն), ուստի սույն մասով նշեմ նաև, որ դրանից առաջ տարիներ շարունակ ես նույն կերպ եմ հայտարարագիր ներկայացրել և իրոք իմ մտքով չի անցել, որ մատնանշված բաժնում «սխալ» եմ լրացնում և որևէ մեկն այդ «սխալի» մասին չի հայտնել: Միաժամանակ, հասկանալով վերոգրյալը՝ ակնհայտ է, որ 2024 թվականի համար դեռևս իմ կողմից չլրացված հայտարարագրում ես այդ խնդիրն այլևս լուծած կլինեմ, այսինքն՝ կներառեմ: Ուստի գտնում եմ, որ հետևանքի առումով նաև այս ամենը չի կարող առաջացնել և չի առաջացրել բացասական հետևանք, իսկ թերությունը 2024 թվականի հայտարարագրում վերացնելով՝ նախորդ տարիներին քննարկվող բաժնեմասնակցության վերաբերյալ չնշելն իմ կարծիքով կդառնա փաստացի նվազ կարևոր:

(…) հայտնելով վերոգրյալի մասին՝ խնդրում և միջնորդում եմ վարույթը կարճել և իմ նկատմամբ չկիրառել որևէ պատասխանատվության միջոց:

Այնուամենայնիվ, եթե Հանձնաժողովը գտնի, որ առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված որևէ առերևույթ զանցանքի հատկանիշներ, ապա խնդրում եմ քննարկման առարկա դարձնել բացառապես նույն օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հատկանիշները, քանի որ չունենալով իրավաբանական ոլորտում գիտելիքներ, սակայն Ձեր այս ծանուցումից հետո ուսումնասիրելով 169.28 հոդվածի 3-րդ մասը, հասկանում եմ, որ իմ կարծիքով վատագույն դեպքում ես կարող էի կատարած լինել հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների խախտում, որպեսզի սա ինձ համար վատթարեցնող հետևանք չառաջացնի և որպես նախազգուշացում լինի, քանզի, ինչպես վերը ներկայացրեցի իմ պատճառաբանությունները և դիտարկումները, հավաստիացնում եմ, որ քննարկվող հանգամանքում իմ բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալները չներառելը չի եղել ո՛չ դիտավորության և ո՛չ էլ՝ անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու արդյունք:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ այս պահին ես խնամում եմ մեր ընտանիքի անդամ՝ կենսաթոշակառու ու ներկայումս առողջական, այդ թվում՝ շարժունակության խնդիրներ ունեցող սկեսրոջս՝ Էմմա Մնացականյանին, և մենք գտնվում ենք Արմավիրի մարզի Ջրարբի գյուղում, որի պատճառով Երևան քաղաքում գտնվող Հանձնաժողով ներկայանալու ճանապարհը, ժամանակահատվածը հաշվի առնելով սկեսուրս չի կարող մենակ մնալ, իսկ ամուսինս աշխատանքի է լինում, ուստի խնդրում և միջնորդում եմ, որպեսզի արձանագրությունը և գործի քննությունն իրականացվի իմ բացակայությամբ՝ սույն հիմնավորմամբ բացակայությունս համարելով հարգելի: Քանզի որպես Հանձնաժողովի անդամ և գործը վարող պաշտոնատար անձանց՝ ես վստահում եմ Ձեր անաչառությանը և գործը վարելու Ձեր պատշաճությանը՝ կրկին անգամ խնդրելով և միջնորդելով՝ քննարկման առարկա դարձնել իմ կողմից վերը գրավոր ներկայացրածս հանգամանքները:»:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/61/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Ղազար Նշանի Ղազարյանը 2021 թվականի դեկտեմբերի 5-ին տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգով տեղի ունեցած ընտրությունների արդյունքում ընտրվել է ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար և մինչ օրս զբաղեցնում է այդ պաշտոնը (https://araqshamaynq.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=74df8d84-69f6-42e0-bd20-48a4a3c50f33):

3.2 ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Նշանի Ղազարյանի 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրի համաձայն՝ Մելանյա Ռաֆայելի Մկրտչյանը հանդիսանում է Ղազար Նշանի Ղազարյանի կինը:

3.3 ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Նշանի Ղազարյանի ընտանիքի անդամ (կին) Մելանյա Ռաֆայելի Մկրտչյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

3.4 ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների համաձայն՝ Մելանյա Մկրտչյանը 2017 թվականի դեկտեմբերի 8-ից հանդիսանում է «Ղ Ֆարմ» ՍՊ ընկերության (Պետական եկամուտների կոմիտեի տվյալների համաձայն գործող ընկերություն է, իսկ լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության)

դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն) 50% բաժնետեր:

3.5 Մելանյա Մկրտչյանը, իր՝ «Ղ Ֆարմ» ՍՊ ընկերության 50% բաժնետեր լինելու տվյալը չի հայտարարագրել Հայտարարագրի «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու հայտարարագրում ներկայացնում են իրենց գույքի և եկամուտների, իսկ դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրերում՝ գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալներ:

4.2 Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը ներկայացվում են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ: Տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար:

4.3 Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են՝ արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում՝ արժեթղթի և (կամ) այլ ներդրման տեսակը, գինը (արժեքը), արժույթը, ձեռք բերելու տարին, ընկերության անվանումը, բաժնեմասնակցության տոկոսը, ումից է այն ձեռք բերվել՝ նշելով նրա անվանումը կամ անունը, ազգանունը և հայրանունը, հասցեն, նրանց միջև առկա կապի բնույթը:

4.4 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.8 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.10 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է

հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, **Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Հանձնաժողովը գտնում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ, մասնավորապես, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ է հետապնդում հանրության համար բացահայտել հայտարարատու անձի գույքային դրության վերաբերյալ տվյալները, որը, տվյալ դեպքում խաթարվել է Մելանյա Մկրտչյանի կողմից սույն որոշմամբ հաստատված փաստերի վերաբերյալ տվյալներ չներկայացնելու արդյունքում:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Սույն գործով ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Նշանի Ղազարյանի ընտանիքի անդամ Մելանյա Ռաֆայելի Մկրտչյանը Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ, 2024 թվականի մայիսի 28-ին ներկայացված 2023 թվականի տարեկան հայտարարագրում թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք՝ Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալ, այն է.

Հայտարարագրի «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում չի ներկայացրել «Ղ Ֆարմ» ՍՊ ընկերության 50% բաժնետեր լինելու վերաբերյալ տվյալը, որը պարտավոր էր ներկայացներ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն:

Տվյալ պարագայում Հանձնաժողովը արձանագրում է, որ Մելանյա Մկրտչյանի կողմից Հայտարարագրում «Ղ Ֆարմ» ՍՊ ընկերության 50% բաժնետեր լինելու տվյալը չհայտարարագրելը հնարավորություն չի տվել ամբողջական պատկերացում կազմել վերջինիս՝ որպես հայտարարատու անձի գույքային դրության մասին և վտանգել է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով պահպանվող հասարակական շահը՝ ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի ընտանիքի անդամի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի ընտանիքի անդամի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Միաժամանակ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Մելանյա Մկրտչյանի «Ղ Ֆարմ» ՍՊ ընկերությունում բաժնետեր լինելու չհայտարարագրված տվյալը որևէ այլ կերպ չի բացահայտվում վերջինիս Հայտարարագրում:

Ինչ վերաբերում է Մելանյա Մկրտչյանի կողմից ներկայացված այն դիրքորոշմանը, համաձայն որի, իր կողմից կատարված իրավախախտումը դրսևորվում է Օրնեսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասի խախտմամբ, ապա Հանձնաժողովն արձանագրում է, որ այն անհիմն է, քանի որ նշված նորմը վերաբերում է այն դեպքերին, երբ հայտարարատուի կողմից չհայտարարագրված տվյալների վերաբերյալ ամբողջ և անհրաժեշտ ծավալի տեղեկությունը հայտարարատու անձի կողմից ներկայացվում է նույն հայտարարագրի մեկ այլ բաժնում, մինչդեռ սույն դեպքում Մելանյա Մկրտչյանի կողմից «Ղ Ֆարմ» ՍՊ ընկերությունում 50 տոկոս բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալ ներկայացված չէ հայտարարագրի որևէ բաժնում:

Մելանյա Մկրտչյանի կողմից ներկայացված այն դիրքորոշման կապակցությամբ, որ իր ընկալմամբ «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում պետք է ներկայացներ որևէ ընկերությունում կամ կոպերատիվում արժեթուղթ՝ մուրհակ կամ գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ ունենալու հանգամանքը, այլ ոչ թե որևէ ՍՊԸ-ում որպես հիմնադիր կամ մասնակից լինելու հանգամանքը, Հանձնաժողովը հայտնում է, որ այն նույնպես անհիմն է, քանի որ Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում ուղղակիորեն նշված է, որ հայտարարագիրը ներառում է հայտարատուին սեփականության իրավունքով պատկանող բաժնային արժեթղթերը, այլ ներդրումը հավաստող փաստաթղթերը (բաժնետոմսը, **բաժնեմասը,** փայաբաժինը), (...): Այդ մասին նշված է նաև Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի տարեկան հայտարարագրի լրացման ուղեցույցում:

Հաշվի առնելով վերոգրյալը Հանձնաժողովը գտնում է, որ Մելանյա Մկրտչյանի կողմից վերոնշյալ փաստարկների հիման վրա կատարված վարույթը կարճելու և իր նկատմամբ որևէ պատասխանատվության միջոց չկիրառելու մասին միջնորդությունը ևս անհիմն է և ենթակա է մերժման:

Ամփոփելով ամբողջ վերոնշյալը, և միաժամանակ հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (*տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով*), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Նշանի Ղազարյանի ընտանիքի անդամ Մելանյա Ռաֆայելի Մկրտչյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի «նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մելանյա Ռաֆայելի Մկրտչյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Մելանյա Ռաֆայելի Մկրտչյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ